ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 14

---

*10 փետրվար 2012թ.*

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխության մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
3. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 28-ի «Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 206 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
   Զեկ. Ա. Սանթրոսյան
4. Գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին
   Զեկ.Ա.Սանթրոսյան
5. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
6. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
7. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
8. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում

կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
9. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
10. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի վարչական մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
11. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
12. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
13. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
14. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
15. Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունը Դիլիջանի քաղաքային համայնքի գույքացանկում ընդգրկելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
16. Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի 5-րդ նրբ. թիվ 4/3 հասցեի 46.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
17. Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 2627.0քմ ընդհանուր մակերեսով թվով 6 հողամասերը աճուրդի և 1487.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու թույլտվություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 15-Ն

*10 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի եկամուտների և ծախսերի տարեկան կատարման հաշվետվությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքային համայնքի բյուջեի եկամուտների տարեկան կատարողականը /հատված թիվ 1/:
2. Հաստատել Դիլիջանի քաղաքային համայնքի բյուջեի ծախսերի տարեկան կատարողականը /հատված թիվ 2/:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(01.01. 2011թ. - 01.01.2012թ. ժամանակահատվածի համար)

| Եկամտատեսակները | Տարեկան հաստատված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում՝ | | Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում՝ | |
| | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 2 | 4 | 5 | 6 | 10 | 11 | 12 |
| ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 288,940.5 | 290,927.5 | 0.0 | 290,235.9 | 290,235.9 | 0.0 |
| այդ թվում՝ 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 70,363.0 | 73,050.0 | X | 71,358.4 | 71,358.4 | X |
| այդ թվում՝ 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից | 37,200.0 | 37,200.0 | X | 35,634.1 | 35,634.1 | X |
| այդ թվում՝ Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 15,500.0 | 15,500.0 | X | 14,939.4 | 14,939.4 | X |
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 21,700.0 | 21,700.0 | X | 20,694.7 | 20,694.7 | X |
| 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 17,557.0 | 17,557.0 | X | 17,394.8 | 17,394.8 | X |
| այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 17,557.0 | 17,557.0 | X | 17,394.8 | 17,394.8 | X |
| 1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ | 10,506.0 | 13,193.0 | X | 14,013.8 | 14,013.8 | X |
| 1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | 5,100.0 | 5,100.0 | X | 4,315.7 | 4,315.7 | X |
| այդ թվում՝ Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր | 5,100.0 | 5,100.0 | X | 4,315.7 | 4,315.7 | X |
| այդ թվում՝ ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար | 1,600.0 | 1,600.0 | X | 1,140.1 | 1,140.1 | X |
| բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված փարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար | 3,500.0 | 3,500.0 | X | 3,175.6 | 3,175.6 | X |
| 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 158,006.0 | 158,006.0 | 0.0 | 158,006.0 | 158,006.0 | 0.0 |
| 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից | 158,006.0 | 158,006.0 | X | 158,006.0 | 158,006.0 | X |
| որից՝ ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 155,621.4 | 155,621.4 | X | 155,621.4 | 155,621.4 | X |
| գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | 2,384.6 | 2,384.6 | X | 2,384.6 | 2,384.6 | X |
| 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 60,571.5 | 59,871.5 | 0.0 | 60,871.5 | 60,871.5 | 0.0 |
| 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ | 37,900.0 | 37,900.0 | X | 39,073.9 | 39,073.9 | X |

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(գործառական դասակարգմամբ)

(01.01.2011թ. - 01.01.2012թ. ժամանակահատվածի համար)

| Բա-ժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Տարեկան հաստատված պլան: Ընդամենը (ս.7 + ս8) | Տարեկան հաստատված պլան: այդ թվում վարչա-կան բյուջե | Տարեկան հաստատված պլան: այդ թվում ֆոնդա-յին բյուջե | Փաստացի: Ընդամենը (ս.13 + ս14) | Փաստացի: այդ թվում վարչա-կան բյուջե | Փաստացի: այդ թվում ֆոնդա-յին բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 12 | 13 | 14 |
| X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 618,887.2 | 290,927.5 | 327,959.7 | 451,545.9 | 290,235.9 | 161,310.0 |
| 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 146,830.6 | 84,780.6 | 61,550.0 | 128,146.0 | 84,600.2 | 43,545.8 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 01 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ | 140,745.0 | 79,195.0 | 61,550.0 | 122,560.4 | 79,014.6 | 43,545.8 |
| | | | որից՝ | | | | | | |
| 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 140,745.0 | 79,195.0 | 61,550.0 | 122,560,4 | 79,014.6 | 43,545.8 |
| 01 | 3 | 0 | Ընդհանուր բնույթի ծառայություններ | 2,271.7 | 2,271.7 | 0.0 | 2,271.7 | 2,271.7 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 01 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 2,271.7 | 2,271.7 | | 2,271.7 | 2,271.7 | |
| 01 | 6 | 0 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 3,313.9 | 3,313.9 | 0.0 | 3,313.9 | 3,313.9 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 01 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 3,313.9 | 3,313.9 | | 3,313.9 | 3,313.9 | |
| 02 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 211.8 | 211.8 | 0.0 | 211.8 | 211.8 | 0.0 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 02 | 1 | 0 | Ռազմական պաշտպանություն | 211.8 | 211.8 | 0.0 | 211.8 | 211.8 | 0.0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 02 | 1 | 1 | Ռազմական պաշտպանություն | 211.8 | 211.8 | | 211.8 | 211.8 | |
| 04 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 130,786.8 | 530.0 | 130,256.8 | 35,575.9 | 530.0 | 35,045.9 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 04 | 2 | 0 | Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն | 530.0 | 530.0 | 0.0 | 530.0 | 530.0 | 0.0 |
| | | | | | 0.0 | | | 0.0 | |
| | | | որից՝ | | | | | | |
| 04 | 2 | 1 | Գյուղատնտեսություն | 530.0 | 530.0 | | 530.0 | 530.0 | |
| 04 | 3 | 0 | Վառելիք և էներգետիկա | 33,256.8 | 0.0 | 33,256.8 | 29,690.1 | 0.0 | -29,690.1 |
| | | | | | 0.0 | | | 0.0 | |
| | | | որից՝ | | | | | | |
| 04 | 3 | 2 | Նավթամթերք և բնական գազ | 33,256.8 | 0.0 | 33,256.8 | 29,690.1 | 0.0 | 29,690.1 |
| 04 | 5 | 0 | Տրանսպորտ | 277,000.0 | 0.0 | 277,000.0 | 217,462.8 | 0.0 | 217,462.8 |
| 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 277,000.0 | | 277,000.0 | 217,462.8 | 0.0 | 217,462.8 |
| 04 | 9 | 0 | Տնտեսական հարաբերություններ | -180,000.0 | 0.0 | -180,000.0 | -212,107.0 | 0.0 | -212,107.0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ | -180,000.0 | : | -180,000.0 | -212,107.0 | | -212,107.0 |
| 05 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 54,519.4 | 33,600.5 | 20,918.9 | 38,504.1 | 33,504.1 | 5,000.0 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |
| 05 | 1 | 0 | Աղբահանում | 37,200.5 | 32,650.5 | 4,550.0 | 37,054.1 | 32,554.1 | 4,500.0 |
| | | | որից՝ | | | | | | |
| 05 | 1 | 1 | Աղբահանում | 37,200.5 | 32,650.5 | 4,550.0 | 37,054.1 | 32,554.1 | 4,500.0 |
| 05 | 6 | 0 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | 17,318.9 | 950.0 | 16,368.9 | 1,450.0 | 950.0 | 500.0 |
| | | | | | | | 0.0 | | |
| | | | որից՝ | | | | | | |
| 05 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | 17,318.9 | 950.0 | 16,368.9 | 1,450.0 | 950.0 | 500.0 |
| 06 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 82,200.9 | 27,771.4 | 54,429.5 | 59,564.8 | 27,492.3 | 32,072.5 |
| | | | այդ թվում՝ | | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 16-Ն

*10 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1919-Ն որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 255 որոշմամբ հաստատված համայնքի 2012 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թվականի վարչական բյուջեի «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» եկամուտներն ավելացնել 1700.51հազ.դրամ
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012 թվականի վարչական բյուջեի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» (բաժին 1 խումբ 3 դաս3) ծախսերն ավելացնել 1700.51հազ.դրամ, որից՝
1) հոդված 4111 –1380.0 հազ.դրամ()
2) հոդված 4131 – 237.0 հազ.դրամ
3) հոդված 4212 – 43.51 հազ.դրամ
4) հոդված 4214 – 7.0 հազ.դրամ
5) հոդված 4221 – 33.0 հազ.դրամ
3. Ավելացնել Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի վարչական մասի եկամուտները «Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ ՝ սուբվենցիա» 2384.6 հազ. դրամ և ծախսերը«Արտադպրոցական դաստիարակություն» /բաժին 09, խումբ 05 , դաս 01. հոդված 4511/ 2384.6 հազ. դրամ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**
**ՈՐՈՇՈՒՄ N 17**

---

*10 փետրվար 2012թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի «ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 20 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Համայնքի ղեկավարը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով, առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն՝ Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակում, հաստիքացուցակում և պաշտոնային դրույքաչափերում փոփոխություն կատարելու մասին:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 28-ի «Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 206 որոշման թիվ 2 հավելվածում կատարել փոփոխություններ և այն հաստատել նոր խմբագրությամբ/հավելվածը կցվում է/:
2. Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարին՝ Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

Հավելված թիվ 2
Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու
2012թվականի փետրվարի -ի թիվ որոշման

# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1,Աշխատակիցների թվաքանակը՝ 47

2,Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 47

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /դրամ/ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 210000 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 168000 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 89000 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 70000 |
| Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար | 1 | 163000 |
| ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ | | |
| Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ | 1 | 143000 |
| Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ | 2 | 89000 |
| Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ | 4 | 71000 |
| ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ | | |
| Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ | 1 | 143000 |
| Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ | 3 | 71000 |
| Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջին կարգի մասնագետ | 1 | 59000 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ | | |
| Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի տարածքային բաժնի պետ | 1 | 115000 |
| ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | | |

| | | |
|---|---|---|
| Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ-աուդիտոր | 1 | 89000 |
| Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան | 1 | 89000 |
| Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ | 4 | 89000 |
| Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ | 3 | 71000 |
| Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 5 | 59000 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Համակարգչային օպերատոր | 1 | 59000 |
| Վարորդ | 1 | 65000 |
| Տնտեսվար | 1 | 59000 |
| Տնտեսվար | 1 | 48500 |
| Հավաքարար | 6 | 32500 |
| Բանվոր | 2 | 40000 |
| Բանվոր ձևավորող | 1 | 32500 |
| Պահակ | 2 | 38000 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 18

*10 փետրվար 2012թ.*

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել Հայրենական Մեծ պատերազմի վետերաններ՝ Արտավազդ Ալիխանյանին, Գուրգեն Ավետիսյանին և Ժորա Ժամհարյանին ազատել գույքահարկի վճարից:Իսկ Դիլիջանի քաղաքապետարան դիմած Գայի 82/3 հասցեի բնակիչ Էմմա Դալլաքյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող շինության 2007-2011թթ. ընթացքում գոյացած գույքահարկի գումարից զիջել 15000 դրամ, Կալինինի 241/10 հասցեի բնակիչ Արա Մնացականյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող ՎԱԶ - 2102 մակնիշի 57 SO 817 պետհամարանիշի փոխադրամիջոցի 2007-2011թթ. ընթացքում գոյացած գույքահարկի գումարից զիջել 12963 դրամ:

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Գույքահարկի գծով սահմանել արտոնություն՝

1. Դիլիջան քաղաքի Շահումյան 3 նրբ. 3 հասցեի բնակիչ Արտավազդ Ալիխանյանին պատկանող ՎԱԶ -21213 մակնիշի 57 SO 277 պետհամարանիշի փոխադրամիջոցի 2012թ. գույքահարկի գումարից 8000 դրամ
2. Դիլիջան քաղաքի Կալինինի 35 հասցեի բնակիչ Գուրգեն Ավետիսյանին պատկանող ՄՈՍԿՎԻՉ -426 մակնիշի 57 SL 596 պետհամարանիշի փոխադրամիջոցի 2012թ. գույքահարկի գումարից 5000 դրամ
3. Դիլիջան քաղաքի Մաքսիմ Գորկի 8 հասցեի բնակիչ Ժորա Ժամհարյանին պատկանող շինության 2012թ գույքահարկի գումարից 6900 դրամ
4. Դիլիջան քաղաքի Գայի 82/3 հասցեի բնակիչ Էմմա Դալլաքյանին պատկանող շինության 2007-2011թթ ընթացքում գոյացած գույքահարկի գումարից 15000 դրամ
5. Դիլիջան քաղաքի Կալինինի 241/10 հասցեի բնակիչ Արա Մնացականյանին պատկանող ՎԱԶ -2102 մակնիշի 57 SO 817 պետհամարանիշի փոխադրամիջոցի 2007-2011թթ. ընթացքում գոյացած գույքահարկի գումարից 12963 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 19

*10 փետրվար 2012թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել Շահումյան փողոցում տեղադրել փողոցի մայթերը լուսավորող թվով 52 էներգոխնայողական լուսատուներ,ինչը թե առավել հարմարավետ կդարձնի բնակիչների տեղաշարժը երեկոյան ժամերին , և թե կգեղեցկացնի քաղաքի նշված հատվածը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի փողոցային լուսավորության շահագործման համար անհրաժեշտ թվով 52 էներգոխնայողական լուսատուների գնման նպատակով Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել 832000 դրամ «Փողոցների լուսավորում» /բաժին 6, խումբ 4, դաս 1, հոդված 5129/:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 20

---

*10 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ
ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել Դիլիջանի քաղաքային համայնքի ենթակայության նախադպրոցական հիմնարկությունների թվով 88 աշխատողներ, խնդրանքով ՝ աջակցել իրենց հերթական բժշկական ստուգումների անցկացմանը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել ընդառաջ գնալ նշված հիմնարկությունների աշխատակիցների խնդրանքին:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ 184800 դրամ գումար հատկացնել 4729 հոդվածին «Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ» /բաժին 09 խումբ 06 դաս 01/ , այդ թվում ՝
«Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն – 20 աշխատող – 42000 դրամ
«Դիլիջանի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն – 22 աշխատող – 46200 դրամ
«Դիլիջանի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն – 15 աշխատող – 31500 դրամ
«Դիլիջանի թիվ 4 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն – 14 աշխատող – 29400 դրամ
«Դիլիջանի թիվ 5 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն – 7 աշխատող – 14700 դրամ
«Դիլիջանի թիվ 6 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն – 10 աշխատող – 21000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 21

*10 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան քաղաքի համայնքային նշանակության Ուսանողական փողոցը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունից ենթարկվել է ֆիզիկական մաշվածության, առաջացել են խորը փոսեր, ինչը խանգարում է ավտոտրանսպորտի և հետիոտնի կանոնավոր և անվտանգ երթևեկությանը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել նշված փաղոցի հիմնանորոգման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Ուսանողական փողոցի սկզբնամասից մինչև բուժուսումնարան ընկած ճանապարհահատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկի փոսային նորոգում» աշխատանքների զնման նպատակով համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 32142070 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 22

*10 փետրվար 20..*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան քաղաքի համայնքային նշանակության Աբովյան փողոցը տարիների ընթացքում արտաքին ազդեցությունից ենթարկվել է ֆիզիկական մաշվածության , առաջացել են խորը փոսեր, ինչը խանգարում է ավտոտրանսպորտի և հետիոտնի կանոնավոր և անվտանգ երթևեկությանը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել նշված փողոցի հիմնանորոգման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի ներհամայնքային նշանակության Աբովյան փողոցի սկզբնամասից մինչև շրջադարձն ընկած ճանապարհահատվածի ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկի փոսային նորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 35922670 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 23

*10 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել «Դիլիջանի թիվ 4 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ք.Դիլիջան , Օրջոնիկիձե 63 հասցեի շենքի վերանորոգման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջանի թիվ 4 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ք.Դիլիջան , Օրջոնիկիձե 63 հասցեի շենքի վերանորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից «Նախադպրոցական կրթություն» /բաժին 09,խումբ 01, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 32140130 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՋԱՄԲԻԼ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 24

*10 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵ
ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈ
ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել փոխհատուցել Դիլիջան քաղաքում գործող «Հույսի Կամուրջ» հասարակական կազմակերպություն հաճախող հաշմանդամ երեխաների և նրանց ուղեկցող ծնողների տրանսպորտային ծախսերը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպություն հաճախող թվով 20 երեխաներին և նրանց ուղեկցող ծնողներին ցույց տալ ֆինանսական աջակցություն:Այդ նպատակով համայնքի 2012թ. բյուջեի վարչական մասից «Սոցիալական հատուկ արտոնություններ» /բաժին 10 , խումբ 07, դաս 01, հոդված 4729/ հատկացնել 235440 դրամ :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց`*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 25

---

*10 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ
ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել Դիլիջան քաղաքում 2012թ, փետրվարի 18-ին կազմակերպել «Դիլիջանյան ձմեռ» մրցույթ-միջոցառում և առավել ակտիվ մասնակիցներին պարգևատրել:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջանյան ձմեռ» մրցույթ-միջոցառման հաղթող ճանաչված մասնակիցների համար նվերների գնման նպատակով համայնքի 2012թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել 500000 դրամ «Այլ մշակութային կազմակերպություններ» /բաժին 08 , խումբ 02 , դաս 04, հոդված 4237 / :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց `*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 26

*10 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել քաղաքն առավել բարետես դարձնելու նպատակով կատարել հնգաթև հուշարձանի և դրան հարակից օղակաձև խաչմերուկի տարածքների բարեկարգման և ճարտարապետական ձևավորման աշխատանքներ:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջանի հնգաթև հուշարձանի և օղակաձև խաչմերուկի հարակից տարածքների բարեկարգում և ճարտարապետական ձևավորում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 14292319 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 27

*10 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել «Դիլիջանի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրինությունը՝ հայտնելով, որ համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի ջեռուցման համակարգը վթարվել է, ինչի հետևանքով շենքը զրկված է ջեռուցումից, անհրաժեշտ է այն վերանորոգել:

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքային ոչ առևտրային կազմակերպության բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով կարճ ժամկետներում վերացնել վթարը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջանի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի ջեռուցման համակարգի վերանորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից «Նախադպրոցական կրթություն» /բաժին 09 , խումբ 01, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 1800000 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 28

*10 փետրվար 2012թ*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դիլիջանի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպեւթյան շենքի լոկալ ջեռուցման համակարգի անխափան և անվտանգ շահագործման համար, համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել ծխաօդափոխիչ համակարգի փորձարկման և շահագործման աշխատանքների զնում:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջանի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մասնաշենքի ծխաօդափոխիչ համակարգի փորձարկում և շահագործում /թվով 3 հատ/ աշխատանքների զնման նպատակով համայնքի 2012թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել 66000 դրամ «Նախադպրոցական կրթություն» /բաժին 09 , խումբ 01 , դաս 01, հոդված 4241 / :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 29

*10 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ

· Դիլիջանի քաղաքային համայնքի Առաջին փողոցի թիվ 14 հասցեի շենքի հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողում քաղ. Ռոզա Հարությունյանի կողմից կառուցվել է ինքնակամ օժանդակ շինություն ՝ 38.9քմ մակերեսով :

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Դիլիջանի քաղաքային համայնքի գույքացանկում համապատասխան հետևյալ արժեքով ընդգրկել.

· Դիլիջանի քաղաքային համայնքի Առաջին փողոցի թիվ 14 հասցեի շենքի հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողում կառուցված ինքնակամ օժանդակ շինություն՝ 38.9քմ - 101140 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 30

*10 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵ ՓՈՂՈՑԻ V ՆՐԲ. ԹԻՎ 4/3 ՀԱՍՑԵԻ 46.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Սերգեյ Խորենի Գիժլարյանը, Օրջոնիկիձե փողոցի V նրբ. թիվ 4/1 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան 140.0քմ տնամերձ հողամասին կից գտնվող /Օրջոնիկիձե փողոց V նրբ. թիվ 4/3 հասցեի/ 46.0քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 46.0քմ մակերեսով հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը: Այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, վերը նշված բնակելի տան սեփականատեր Սերգեյ Գիժլարյանին: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման առաջին գոտում:
Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջանի Օրջոնիկիձե փողոց V նրբ. թիվ 4/3 հասցեի 46.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 57132 դրամ արժեքով օտարել քաղ. Սերգեյ Գիժլարյանին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն Դիլիջանի Օրջոնիկիձե փողոց V նրբ. թիվ 4/3 հասցեի 46.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 57132 դրամ արժեքով, քաղ. Սերգեյ Գիժլարյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 31

---

*10 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 2627.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 6 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ 1487.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. փետրվարի 9-ի թիվ 38 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 2627.0քմ ընդհանուր մակերեսով թվով 6 հողամասերը աճուրդի և 1487.0 քմ ըմդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին հարցը՝ կից աղուսյակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 2627.0քմ ընդհանուր մակերեսով թվով 6 հողամասերը աճուրդի և 1487.0 քմ ըմդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Աղյուսակ.

## Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի աճուրդ-վաճառք

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 1/ՔՀ-12/ | Կալինինի 4-րդ նրբ. 49/2 | 076-032 | 997.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | անհատական բնակելի տան կառուցման | 2,492,500 | չկան |
| 2 | Լոտ 2/ՔՀ-12/ | Մոլդովական 15/1 | 654-012 | 200.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | անհատական բնակելի տան կառուցման | 500,000 | չկան |
| 3 | Լոտ 3/ՔՀ-12/ | Այգեստան 2/3 | 053-404 | 24.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | առևտրի տաղավարի կառուցման | 60,000 | չկան |
| 4 | Լոտ 4/ՔՀ-12/ | Այգեստան 2/4 | 053-405 | 32.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | առևտրի տաղավարի կառուցման | 80,000 | չկան |
| 5 | Լոտ 5/ՔՀ-12/ | Սարալանջի 1-ին նրբ. 14 | 053-347 | 500.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | անհատական բնակելի տան կառուցման | 1,250,000 | չկան |
| 6 | Լոտ 6/ՔՀ-12/ | Սարալանջի 6-րդ նրբ. 4 | 053-407 | 874.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | անհատական բնակելի տան կառուցման | 2,185,000 | չկան |
| 7 | Լոտ 231/ՔՀ-10/ կրկնաճուրդ | Սարալանջի 37 | 053-364 | 626.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | անհատական բնակելի տան կառուցման | 1,565,000 | չկան |
| 8 | Լոտ 98/ՔՀ-09/ կրկնաճուրդ | Տիգրան Պետրոսյան 2-րդ նրբ. 21 | 040-239 | 861.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | անհատական բնակելի տան կառուցման | 2,152,500 | չկան |

*Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* [signature] *Ա. Մարտիրոսյան*